ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Սովետահայ պատմագիտության ձևավորումն ու զարգացումն ընթացել է հայ բազմադարյան պատմագիտության և մինչհեղափոխական հայ մարքսիստական պատմական մտքի ձեռք բերած նվաճումների ստեղծագործական յուրացման միջոցով։

Սովետահայ պատմագիտությունն անցել է զարգացման երեք հիմնական փուլ։ Դրանցից առաջինն ընդգրկում է Հայաստանում սովետական իշխանության հաստատումից մինչև 1930-ական թվականների կեսն ընկած ժամանակաշրջանը (մինչև պատմագիտության զարգացման մասին կուսակցության հայտնի որոշումների ընդունումը). դա սովետահայ պատմագիտության կազմավորման էտապն է, որի հիմնական բովանդակությունն էր պատմական պրոցեսի մարքսիստական ըմբռնման արմատավորումը։ Այդ փուլում հին ֆորմացիայի պատմաբանների հետ մեկտեղ գիտական գործունեության ասպարեզ մտավ սովետական պատմաբանների սերունդը, որը ձևավորվել էր արդեն սովետական իշխանության պայմաններում։ Հին և միջնադարյան Հայաստանի պատմության պրոբլեմներից բացի, այդ փուլի սովետահայ պատմագիտության տեսադաշտում էին գտնվում հեղափոխական շարժման և սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության պրոբլեմները։ Վերջապես, այդ շրջանում ձևավորվեցին այն պետական գիտական հիմնարկությունները, որոնց կոլեկտիվները զբաղվում էին պատմության պրոբլեմների մշակմամբ։

Երկրորդ փուլն ընդգրկում է 1930-ական թվականների կեսից մինչև 1950-ական թվականների երկրորդ կեսն ընկած ժամանակաշրջանը։ Ինայած սովետական հասարակության կյանքում տեղ գտած որոշ բացասական երևույթներին՝ կապված անձի պաշտամունքի հետ, որոնք անդրադառնում էին նաև պատմագիտության վիճակի վրա, այդ փուլը բնորոշվում է նրանով, որ շարունակվում էր ընդլայնվել հետազոտությունների թեմատիկան, պատմաբանները զբաղվում էին սոցիալիստական շինարարության պատմության պրոբլեմներով, ավելի խորն էին ուսումնասիրվում հայ ժողովրդի պատմության սոցիալ-տնտեսական և քաղաքական հարցերը։

1950-ական թվականների երկրորդ կեսից սկսվեց սովետահայ պատմագիտության զարգացման երրորդ փուլը։ Կուսակցական կյանքի լենինյան նորմերի վերականգնման և գաղափարախոսական աշխատանքում դոգմատիզմի ու տիրացուականության հաղթահարման ուղղությամբ. կուսակցության ձեռնարկած միջոցները բարերար ազդեցություն ունեցան սովետական պատմագիտության զարգացման վրա։ Նշանակալիորեն ընդլայնվեց սովետահայ պատմաբանների հետազոտությունների թեմատիկան՝ լուսաբանվեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության պրոբլեմները, արտասահմանի հայկական բնակավայրերի և գաղութների պատմությունը, զգա-

լիորեն առաջ շարժվեց հանրապետությունում սոցիալիստական շինարարության պատմության ուսումնասիրությունը։ Հենց այդ փուլում, հենվելով նախորդ տարիների նվաճումների վրա, հայ պատմաբանները ձեռնամուխ եղան հիմնավոր ընդհանրացնող աշխատությունների՝ բազմահատոր «Հայ ժողովրդի պատմության», «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերի» և այլ գործերի ստեղծմանը։

Սովետահայ պատմագիտությունը նշանակալից հաջողությունների հասավ նաև Հայաստանի պատմության մի շարք արմատական պրոբլեմների մշակման գործում։ Դրանցից է հայ ժողովրդի ծագման հարցը։ Հաղթահարելով հայ ժողովրդի ծագման իդեալիստական սխեման, որին հետևում էր հայ կղերաֆեոդալական և բուրժուական պատմագիտությունը, սովետահայ պատմական միտքն առաջարկեց այդ բարդ հարցի իր լուծումը, հենվելով նյութական կուլտուրայի, լեզվի և մարդաբանության տվյալների վրա։ Հայ ժողովրդի ծագման պրոբլեմի մշակման գործում սովետահայ պատմագիտությունը մի քանի փուլ է անցել։ Եթե 1920—1930-ական թվականներին այդ հարցի լուծման ժամանակ սովետահայ պատմագիտությունը ենթարկվում էր միգրացիոն տեսության ուժեղ ազդեցությանը, որը հանգեցրեց հայ ժողովրդի կազմավորման գործում ներգաղթած հնդեվրոպական բաղադրամասերի դերի բացահայտ չափազանցմանը[1], ապա հաջորդ փուլում՝ 1940-ական թվականներին, Ն. Մառի տեսության ներգործությամբ, միգրացիայի դերը, իսկ դրա հետ միասին հայ ժողովրդի կազմավորման գործում հնդեվրոպական տարրի մասնակցությունը, անտեսվեց։ Հիմնական ուշադրությունը դարձվեց Հայկական լեռնաշխարհի էթնիկական խմբերի, այսինքն այն տարրերի ուսումնասիրմանը, որոնք հայ ժողովրդի կազմավորման ժամանակ հանդես են եկել որպես բնիկ տարրեր[2]։

Այդ պրոբլեմի ուսումնասիրման երրորդ փուլը սկսվեց 1950-ական թվականներից։ Այդ ժամանակաշրջանի աշխատություններում հայ ժողովրդի ծագումը դիտվում է որպես երկարատև ու բարդ պրոցես, որին մասնակցել են ինչպես Ուրարտու պետության ընդերքում ձևավորված տեղական էթնիկական տարրը, այնպես էլ հնդեվրոպական եկվոր ցեղերը[3]։ Կարծիքներ են հայտնվել հնդեվրոպական ժողովուրդների տեղայնացման վերաբերյալ։ Մասնավորապես, որպես հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիք, մատնանշվում է Փոքր Ասիան, Հայկական բարձրավանդակը և հարակից շրջանները[4]։

---

1 Ա. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944։

2 Г. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947; Բ. Ն. Առաքելյան, Միգրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման հարցը, Երևան, 1948։

3 С. Т. Еремян, К вопросу об этногенезе армян («Вопросы истории», 1952, № 7); И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968 և այլն։

4 Олег Широков, Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины («Вестник общественных наук» АН Арм. ССР, 1980, № 5); Георгин Клычков, Модель глоттогенеза армян («Вестник общественных наук», 1980, № 8); Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Реконструкция системы смычных общеиндоевропейского языка... («Вопросы языкознания», 1980, № 4); их же, Древняя Передняя Азия и индоевропейская проблема... («Вестник древней истории», 1980, № 3); С. Орлова, Индоевропейцы. Кто они? Откуда они? («Знание—сила», 1980, № 2) և այլն։

Այս նոր տեսակետը կարող է արմատական փոփոխություններ մտցնել նաև հայ ժողովրդի ծագման խնդրում։

Սովետահայ պատմագիտությունը մեծ ուշադրություն նվիրեց հին Հայաստանի հասարակարգի ուսումնասիրմանը։ Եթե սկզբնապես գերակշռում էր այն կարծիքը, թե Հայաստանում ստրկատիրությունը կրել է նահապետական, տնային բնույթ, ապա 1950—1960-ական թվականներին կատարված հետազոտությունները հանգեցրին այն դրույթի հաստատմանը, որ ստրկատիրությունը Հայաստանում հին արևելյան ստրկատիրական հասարակությունների տիպ էր՝ երկրի էկոնոմիկայում գյուղական համայնքի զգալի տեսակարար կշռով։ Ավելին, հետևություն արվեց հին Հայաստանի պետական կարգի ստրկատիրական բնույթի մասին, հետազոտվեցին հայկական ստրկատիրական հասարակության առանձնահատկությունները[5]։ Շարունակվեց հին Հայաստանի քաղաքների ուսումնասիրությունը, որը սկսել էր Հ. Մանանդյանը, ընդգծելով դրանց ստրկատիրական բնույթը, ուսումնասիրվեց հին Հայաստանի եկեղեցական տնտեսությունը[6]։ Նշանակալիորեն առաջ շարժվեց անտիկ դարաշրջանի հայ կուլտուրայի պատմության ուսումնասիրությունը[7]։

Հին Հայաստանի քաղաքական պատմության հետազոտման գործում մեծ ավանդ է ներդրել Հ. Մանանդյանը։ Մեծավաստակ պատմաբանի «Тигран II и Рим» (Երևան, 1943) մենագրությունը և նրա «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» (Երևան, 1944—1952) կապիտալ աշխատության առաջին երկու հատորները սովետահայ պատմագիտության լավագույն նվաճումներից են, որոնք, մեծ քանակությամբ աղբյուրներ ընդգրկելով, հետազոտում են հայ ժողովրդի պատմությունը հելլենիզմի դարաշրջանում, Հայաստանի պայքարը Հռոմի ագրեսիայի դեմ։

Սովետահայ պատմագիտությունը լուրջ ուշադրություն դարձրեց միջնադարյան Հայաստանի պատմության բազմազան պրոբլեմների հետազոտմանը։ Այդ դարաշրջանի կարևոր պրոբլեմը հայկական ֆեոդալական հասարակության ծագման և նրա պատմության հիմնական շրջանների հարցն է։ Հայտնի է, որ նախասովետական հայ պատմագիտության մեջ ֆեոդալիզմի պատմության պրոբլեմն առավել խոր է լուսաբանել Ն. Ադոնցը, որը հիմնական ուշադրությունը դարձնում էր հայկական ֆեոդալիզմի սոցիալ-իրավական կառուցվածքի վերլուծության վրա և գտնում, որ ֆեոդալիզմը եղել է ոչ միայն միջնադարյան, այլև հին Հայաստանի տիրապետող հասարակական-քաղաքական կարգը։ Հ. Մանանդյանը, որը ստեղծել է Հայաստանում ֆեոդալիզմի պատ-

---

5 Խ. Սամվելյան, Ստրկությունը հին Հայաստանում («Տեղեկագիր ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № 2), Я. А. Манандян. Проблема общественного строя доаршакидской Армении («Исторические записки», 1945, т. 15); С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении («Вестник древней истории», 1950. № 1); Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962։

6 А. Г. Пернханян, Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н. э.—III в. н. э.), М., 1959; Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960; Г. А. Тирацян, Ахеменидские традиции в древней Армении, М., 1960; Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության գրվագներ, Երևան, 1970.

7 Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.). Ереван, 1976 և այլն։

մության վերաբերյալ աշխատությունների շարք[8], էական ճշտումներ մտցրեց ֆեոդալիզմի ծագման ժամանակի որոշման հարցում, և որ առանձնապես կարևոր է, դրաղվեց ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պրոբլեմների հետազոտմամբ, քննելով հողատիրության ձևերը, հարկային բաղաքականությունը, բնակչության, ամենից առաջ գյուղացիության՝ ֆեոդալական հասարակության հիմնական արտադրող դասակարգի, սոցիալական դրությունը։

Հետագայում հայկական ֆեոդալիզմի ծագման և պատմության ընդհանուր պրոբլեմները լուսաբանվել են Ս. Երեմյանի աշխատություններում։ Նա հիմնավորեց, որ Հայաստանում ֆեոդալական հասարակությունն առաջացել է մեր թվականության II—III դդ., երբ ստրկատիրական հասարակարգն անպտուղ ճգնաժամ էր ապրում։ Ս. Երեմյանը մշակել է հին և միջնադարյան Հայաստանի պատմության պարբերացումը։ Ներկայումս սովետահայ պատմագիտության մեջ հաստատվել է այն տեսակետը, որի համաձայն հայկական ֆեոդալական հասարակությունն անցել է երեք հիմնական փուլ՝ վաղ ֆեոդալիզմ (III—VIII դդ.), զարգացած ֆեոդալիզմ (IX—XIII դդ.), ֆեոդալական հասարակության աստիճանական անկում (XIV—XVIII դդ.)։ Ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանի պատմական զարգացման պրոցեսի ընդհանուր օրինաչափությունները բացահայտված են մի շարք հեղինակների աշխատություններում[9]։

Զգալի չափով գրականություն է ստեղծվել հայկական ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական պատմության պրոբլեմների վերաբերյալ։ Հետազոտվել են ֆեոդալական տնտեսության հիմնական գծերը, նրա էվոլյուցիան, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացումը, որոնցով բնորոշվում են Հայաստանում ֆեոդալիզմի պատմության փուլերը։ Լրջորեն հետազոտվել են ֆեոդալիզմի ժամանակաշրջանում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի այնպիսի հարցեր, ինչպես հողատիրության ձևերը, հարկային ինստիտուտները, առևտրի ու արհեստների վիճակը, քաղաքային կյանքը, գյուղացիության ճորտացման պրոցեսը և նրա առանձնահատկությունները, գյուղական համայնքը և նրա տեղը երկրի տնտեսական կյանքում և շատ այլ հարցեր[10]։ Ընդ որում, հետազոտողները գիտական շրջանառության մեջ են դրել մեծ քանակությամբ փաստական նյութ,

---

8 Հ. Մանանդյան, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանական շրջանում, Երևան, 1926, նույնի՝ Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1930, նույնի՝ О торговле и городах Армении, Ереван, 1930 և այլն։

9 С. Т. Еремян, Армения в III—IX вв. («Очерки истории СССР», М., 1958); Ս. Պողոսյան, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում IX—XIII դդ., Երևան, 1958, Լ. Բարայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964 և այլն։

10 Բ. Ավգալրեգյան, Բահրան ու մուլքը XVII—XVIII դդ. («Նորք», 1923, № 2), Հ. Զորյան, Արարների հարկային քաղաքականությունը Հայաստանում («Երևանի պետական համալսարանի տեղեկագիր», 1927, № 2—3), Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, 2, Երևան, 1958, 1964, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, 2, Երևան, 1957, 1958, Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956, А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972 և այլն։

որը քաղվել է ինչպես հայկական, այնպես էլ բազմաթիվ օտարալեզու (արաբական, բյուզանդական, պարսկական, թուրքական և այլն) աղբյուրներից։ Դրանց վերջին խումբը թույլ տվեց ավելի լրիվ պատկերացնել այն սոցիալական քաղաքականությունը, որ Հայաստանում իրականացնում էին միմյանց փոխարինող օտարերկրյա նվաճողները։

Հիմնավոր ուսումնասիրվեց ֆեոդալական Հայաստանում սոցիալական շարժումների, առանձնապես պավլիկյան և թոնդրակեցիների շարժումների պատմությունը։ Հետազոտողները բացահայտել են կրոնական քողի տակ հանդես եկող այդ շարժումների դասակարգային էությունը, ցույց տվել, որ դրանց շարժիչ ուժը եղել են աշխատավոր մասսաները, իսկ պայքարի սուր ծայրն ուղղված է եղել ոչ միայն եկեղեցու, այլև տիրապետող դասակարգի դեմ[11]։

Ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի պատմությունը հագեցված է մեծ նշանակություն ունեցող իրադարձություններով, աչքի է ընկնում վերելքներով ու անկումներով, օտարերկրյա ստրկացնողների դեմ ժողովրդի մղած բազմադարյան պայքարով, Հայաստանի ազատագրման ուղիների համառ որոնումներով։ Այդ դարաշրջանի հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրել է Լեոն (Ա. Բաբախանյան) իր եռահատոր «Հայոց պատմության» մեջ, որը գրել է մինչև հեղափոխությունը (հ. 1, Թիֆլիս, 1917, հ. 2, 3, Երևան, 1946—1947)։ X—XV դդ. քաղաքական իրադարձությունները լուսաբանված են Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության երրորդ հատորում (Երևան, 1952)։ Միջնադարյան Հայաստանի պատմության համառոտ ուրվագիծը, որի հեղինակն է Ս. Երեմյանը, զետեղված է «Очерки истории СССР»-ի մեջ (Մ., 1958)։ Հետագայում միջնադարյան Հայաստանի պատմության հետազոտությունն առավելապես կատարվել է ռեգիոնալ հարցերի մշակման ուղղությամբ։ Բացառություն կարող են կազմել Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» հիմնակազմ աշխատությունը (գիրք 1, 2, Երևան, 1957, 1959), որտեղ հայ ժողովրդի ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորման ու զարգացման տեսանկյունով քննվում են Հայաստանի պատմության հիմնական քաղաքական իրադարձությունները՝ սկսած վաղ միջնադարից մինչև XVIII դ. սկիզբը։

Մենագրական հետազոտությունների մեջ են ներգրավվել Հայաստանի միջնադարյան պատմության շատ պրոբլեմներ՝ արաբական և մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանները, հայ-բյուզանդական հարաբերությունները, Հայաստանի դրությունը XVIII դ. առաջին կեսին՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև երկրի բաժանման պայմաններում, Խաչենի հայկական իշխանության պատմությունը X—XIV դդ., հայ ժողովրդի XVII—XVIII դդ. ազատագրական պայքարի պատմությունը և այլն[12]։

---

11 А. Г. Иоаннисян, Движение тондракитов в Армении IX—XI вв. («Вопросы истории», 1954, № 10); Р. М. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961 և այլն։

12 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս, Ա, Բ, Երևան, 1955, 1958 (առաջարաններ), Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, նույնի՝ Армения в первой половине XVI в., М., 1971; Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայաստա-

XII դ. Կիլիկիայում առաջ եկավ հայկական պետականություն, որը գոյություն ունեցավ մինչև XIV դ. երկրորդ կեսը։ Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությանը, նրա սոցիալ-տնտեսական կարգին, միջազգային հարաբերություններում այդ պետության ունեցած դերին են նվիրված մի քանի հետազոտություններ[13]։

Զգալի աշխատանք է կատարված հին և միջին դարերի հայ մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ պրոբլեմին նվիրված բազմաթիվ աշխատանքների մեջ աչքի են ընկնում Հ. Մանանդյանի հետազոտությունը հունաբան դպրոցի մասին, Ա. Գ. Աբրահամյանի մի քանի աշխատանքները միջնադարյան հայկական գիտության, փիլիսոփայության և պատմագիտության աչքի ընկնող ներկայացուցիչների մասին, Աշ. Հովհաննիսյանի աշխատությունը՝ նվիրված միջնադարյան հայ բանաստեղծ Ֆրիկին։ «Սասունցի Դավիթ» էպոսի և միջնադարյան Հայաստանի առակների մասին Հ. Օրբելու գրած աշխատություններում բացահայտված է այդ գրական հուշարձանների սոցիալական էությունը։ Հայ մշակույթի պատմաբանի համար օգտակար են գրականության և արվեստի պատմության վերաբերյալ աշխատանքները, որ ստեղծել են Մ. Աբեղյանը, Թ. Թորամանյանը, Գ. Լևոնյանը, Գ. Գոյանը, Լ. Դուռնովոն, Հ. Հովհաննիսյանը և շատ ուրիշներ։

Հայաստանի նոր պատմության կենտրոնական իրադարձությունը, որը պայմանավորեց հայ ժողովրդի պատմական զարգացման հետագա ընթացքը, Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանի հետ (1828)։ Ուստի բնական է, որ այդ իրադարձության սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման ու զարգացման պատմության, միացման ակտի նշանակության և պատմական հետևանքների հետազոտմանը սովետահայ պատմագիտության մեջ նվիրված են նշանակալից թվով աշխատություններ։

Հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման ձևավորման ու զարգացման պրոբլեմը խորապես լուսաբանվել է Աշ. Հովհաննիսյանի աշխատություններում, մասնավորապես նրա «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» մենագրության մեջ, որը ներառել է հեղինակի նախորդ հետազոտությունների հիմնական արդյունքները։ Քննելով հայ ազատագրական մտքի նկրտումները, հեղինակը բացահայտել է սոցիալ-տնտեսական և քաղաքական այն նախադրյալները, որոնք պայմանավորեցին հայ ժողովրդի վերջնական ընտրությունը, որը XVIII դ. սկզբին իր ազատագրման հեռանկարները կապեց Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջորդ փուլը, որ վերաբերում է XVIII դ. երկրորդ կեսին, հետազոտել է Ա. Ռ. Հովհաննիսյանը։ Նրա աշխատություններից մեկը նվիրված է Ռուսաստանի հետ Հայաստանի միացման ջատագով Հ. Էմինի գործունեու-

---

նը VII—IX դարերում, Երևան, 1968, Բ. Ուլուբաբյան, Խալեֆի իշխանությունը X—XIV դարերում, Երևան, 1975, А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977; Ս. Վ. Բոռնազյան, Հայաստանը և սելջուկները XI—XII դդ., Երևան, 1980 և այլն։

[13] Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952; Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, Ս. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII—XIV դարերում, Երևան, 1973։

թյանը, իսկ մյուսում քննվում են Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրման պլանները, որոնք մշակվել են XVIII դ. վերջին։ Հայ-ռուսական հարաբերություններին և XVIII դ. ազատագրական շարժմանը նվիրված են մի քանի աշխատություններ[14]։

XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի ռուս-հայկական հարաբերությունների առավել ուշագրավ էջերը լուսաբանված են Մ. Ներսիսյանի «Из истории русско-армянских отношений» (գիրք 1, 2, Երևան, 1956, 1961) երկհատոր մենագրության մեջ։ Հեղինակը, հենվելով փաստական հարուստ նյութի վրա, լուսաբանել է Ա. Սուվորովի դերը ռուս-հայկական հարաբերություններում, հայերի մասնակցությունը 1812 թ. հայրենական պատերազմին, վերլուծել է ժամանակակիցների (Ա. Գրիբոեդով, Հ. Ալամդարյան, Խ. Աբովյան, Մ. Բաղիրյան) վերաբերմունքը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմական ակտի նկատմամբ։

Սովետահայ պատմաբանները մանրամասն քննել են Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացմանն անմիջականորեն առնչվող իրադարձությունները՝ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, դեկաբրիստների մասնակցությունը Հայաստանի ազատագրման գործին և նրանց վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, Ա. Գրիբոեդովի դերը ռուս-հայկական հարաբերություններում և այլն[15]։ Ա. Ռ. Հովհաննիսյանի «Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия» (Երևան, 1958) մենագրության մեջ քննված է Ռուսաստանի հետ Անդրկովկասի միացման դիվանագիտական պատմության, Ռուսաստանի հզորացմանը արևմտյան տերությունների ընդդիմության հետ կապված հարցերի համալիրը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությանը նվիրված մի շարք նոր աշխատություններ ստեղծվել են այդ իրադարձության 150-ամյակի կապակցությամբ[16]։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հետ կապված պրոբլեմների խոր, փաստարկներով հիմնավորված հետազոտությունը հանգեցրեց այն բանին, որ սովետահայ պատմագիտության մեջ հաստատվեց այդ իրա-

---

14 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945; Նույնի՝ Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947; П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., М., 1954; Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, Վ. Ա. Դիլոյան, Լաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966։

15 Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, Մ. Գ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, Նույնի՝ Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958 և այլն։

16 Г. А. Галоян, Россия и народы Закавказья. Очерки политической истории их взаимоотношений с древних времен до победы Великой Октябрьской социалистической революции, М., 1976; Ц. П. Агаян, Роль России в исторических судьбах армянского народа, М., 1978; Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, Զ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, Վ. Ա. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, Երևան, 1978; «Присоединение Восточной Армении к России и его историческое значение», Ереван, 1978.

դարձության պատմական նշանակության միասնական գնահատական։ Հաղթահարվեցին անցյալում եղած այն կարծիքները, որոնք չէին ընդունում Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը կամ հայ ժողովրդի ընտրությունը համարում էին «չարիքներից փոքրագույնը»։ Հայ ժողովրդի դրության ուսումնասիրումը մինչև միացումը, Արևելյան Հայաստանի տարածքում հայ աղդի համախմբման հարցերի, համախմբում, որը հնարավոր դարձավ Ռուսաստանի հետ միացումից հետո, ռուսական պետության կազմում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման պրոբլեմների քննությունը համողիչ կերպով ցույց տվեցին, որ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը անտարակույս առաջադիմական վիթխարի նշանակություն ունեցող ակտ էր և մեծ ներգործություն ունեցավ հայ ժողովրդի այդ հատվածի հետագա ամբողջ զարգացման վրա։

Սովետահայ պատմագիտության մեջ լուսաբանվել են Ռուսաստանի կազմում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը՝ ցարիզմի քաղաքականությունն Արևելյան Հայաստանում, գյուղացիական ռեֆորմի կենսագործումը և գյուղացիական շարժումը Հայաստանում, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հայկական գյուղում XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին և այլն[17]։ XIX դ.—XX դ. սկզբին Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացման հիմնական գծերը քննվել են տնտեսագետ-հետազոտողների աշխատություններում (Օ. Թումանյան, Մ. Ագոնց և ուրիշներ)։

XIX դ. կեսից սկսվում է հայ հասարակական մտքի վերելքը, հայ իրականության մեջ ձևավորվում են հասարակական հոսանքներ, որոնցից յուրաքանչյուրը, արտահայտելով որոշակի դասակարգերի ու խավերի շահերը, առաջարկում էր հայ հասարակությանը հուզող պրոբլեմների լուծման իր ուղիները։ XIX դ. հայ հասարակական-քաղաքական մտքի հետազոտման գործում զգալի ավանդ է ներդրել Աշ. Հովհաննիսյանը։ Նրա «Նալբանդյանը և նրա ժամանակը» (հ. 1, 2, Երևան, 1955, 1956) երկհատոր մենագրության մեջ, որն ընդհանրացրել է հեղինակի երկար տարիների հետազոտությունները Նալբանդյանագիտության բնագավառում, վերաստեղծված է դարաշրջանի լայն կտավը, տրված է հայ հասարակական-քաղաքական հոսանքների բնութագիրը, մանրամասնորեն քննված են հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանի գործունեությունը, նրա կապերը ռուսական հեղափոխական միջավայրի հետ և այլ պրոբլեմներ։ Մի քանի հետազոտություններ են նվիրված XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքներին, հայ իրականության մի շարք հարցերի վերաբերյալ նրանց դիրքորոշման բացահայտմանը[18]։

---

17 Վ. Ա. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947; նույնի՝ Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, Երևան, 1960, А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1917). Ереван, 1959; Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879), հ. 1, Երևան, 1961 և այլն։

18 Վ. Ա. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից (XIX դ. երկրորդ կես), Երևան, 1956, Վ. Ս. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար

Արևելահայ հասարակական-քաղաքական միտքը հետագայում ևս զարգացել է ռուսական իրականության անմիջական ներգործության տակ։ XIX դ. երկրորդ կեսին Անդրկովկասում առաջացան նարոդնիկական խմբակներ, որոնց գործունեությանը մասնակցում էին նաև հայ հեղափոխական շրջանների ներկայացուցիչները։ Այդ պրոցեսը լուսաբանել է Մ. Ներսիսյանը[19]։ Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության հաջորդ փուլը վերաբերում է XIX դ. վերջին, երբ ձևավորվեցին հայկական քաղաքական կուսակցությունները։ Սովետահայ պատմագիտության մեջ նշված շրջանը շատ թույլ է լուսաբանված։ Թեև դեռևս 1920-ական թվականների սկզբին հայ բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության գաղափարախոսության և տակտիկայի որոշ հարցերի շուրջը մամուլում աշխույժ բանավեճեր էին մղվում (Աշ. Հովհաննիսյան, Ա. Կարինյան և ուրիշներ), սակայն ամբողջությամբ վերցրած պրոբլեմը կարիք է զգում լուրջ հետազոտության։

Ռուսաստանի կազմում Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման օրինաչափ հետևանքն էր մարքսիզմի ներթափանցումը հայ իրականություն, իսկ դրանից անմիջապես հետո սոցիալ-դեմոկրատական բանվորական առաջին խմբակների ու կազմակերպությունների առաջացումը։ Այդ հարցերը լուսաբանվել են հայ պատմաբանների աշխատություններում[20]։

1950-ական թվականների կեսից սովետահայ պատմագիտությունը ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի պատմության, մասնավորապես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության հետ կապված պրոբլեմների հետազոտմանը։ Նշված պրոբլեմների ուսումնասիրության գործում ծանրակշիռ ներդրում էր Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ 1850—1870 թթ.» (Երևան, 1955) մենագրությունը։ Այդ հետազոտության մեջ հեղինակն անդրադարձել է արևմտահայերի սոցիալ-տնտեսական դրությանը, հայ ժողովրդի ազատագրական պայքարին, այդ պայքարի գաղափարախոսությանը, արևմտահայերի ազատագրական ձգտումների նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքին և այլ հարցերի։ Մ. Ներսիսյանի մենագրությունն առաջինն է այն աշխատությունների մեջ, որոնցում լուսաբանված են Արևմտյան Հայաստանի պատմության հիմնական հարցերը՝ արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը թուրքական տիրակալության պայմաններում, հասարակական-քաղաքական հոսանքները և նրանց գաղափարախոսությունը, ագրարային հարաբերությունները XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին, օսմանյան կառավարության ագրարային քաղաքականությունը, ազգային-ազատագրական պայքարի հիմնական իրադարձությունները, Հայկական հարցի

Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970, Մ. Մխիթարյան, Արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, Г. М. Казарян, Армянское общественно-политическое движение в 50—60-х гг. XIX века и Россия, Ереван, 1979 և այլն։

19 Մ. Գ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940։

20 Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 1, 2, Երևան, 1967, 1974, Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքսլենինյան էտապի սկիզբը, Երևան, 1976 և այլն։

առաջացումը, հայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքավորումը այդ հարցի նկատմամբ, մեծ տերությունների պայքարը դրա շուրջը և այլն[21]։

Ս. Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» (Երևան, 1976) ծավալուն մենագրության մեջ հանգամանորեն շարադրվում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հիմնական իրադարձությունները՝ Հայկական հարցի առաջացման ժամանակից մինչև սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, լուսաբանվում է ազգային-ազատագրական պայքարի հայտնի հերոս Անդրանիկի գործունեությունը։

Ռուսական առաջին հեղափոխության (1905—1907) տարիները Հայաստանում աչքի են ընկնում գործադուլային շարժման վերելքով, գյուղացիների հակակառավարական ելույթներով, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության ընդլայնմամբ։ Այդ իրադարձությունները լուսաբանվում են հեղափոխական շարժման պատմությանը և ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում Հայաստանի դրությանը նվիրված մի շարք հետազոտություններում[22]։

Զգալի քանակությամբ գրականություն է ստեղծվել առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի վերաբերյալ, որի ընթացքում ավելի քան մեկուկես միլիոն հայեր դարձան Թուրքիայի կառավարող շրջանների կազմակերպած ցեղասպանության զոհերը, իսկ Արևմտյան Հայաստանը զրկվեց իր բնիկ բնակչությունից։ Այդ ժամանակաշրջանի հարցերից, որոնք քննել է սովետահայ պատմագիտությունը, առավել լրիվ չափով են լուսաբանվել հետևյալ խնդիրները՝ ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում և Հայաստանը, իմպերիալիստական տերությունների պլաններն Արևմտյան Հայաստանի վերաբերյալ, արևմտահայ բնակչության ցեղասպանությունն ու տեղահանությունը, միջազգային հասարակայնության արձագանքները հայերի ցեղասպանության առթիվ, Հայաստանի ընդհանուր դրությունն առաջին համաշ-

---

21 Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժման պատմությունից, Երևան, 1958, Е. К. Саркисов, Аграрная политика Османской империи в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957; Վ. Մելիքսեթյան, Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914 թթ.), Երևան, 1965, նույնի՝ Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, Ռ. Փ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, Հ. Մ. Ղաղարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, Հ. Գ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները, Երևան, 1967, Ջ. Ս. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), Երևան, 1978, նույնի՝ Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), Երևան, 1980 և այլն։

22 Ս. Պ. Ազայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, Վ. Ա. Պարսամյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, Դ. Ա. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964 և այլն։

խարհային պատերազմի և Փետրվարյան հեղափոխության տարիներին, Հայկական հարցն այդ նույն տարիներին և այլն[23]։

Սովետահայ պատմագիտության մեջ կենտրոնական տեղերից մեկը գրավում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության պրոբլեմների մշակումը։ Պատմաբանների հետաքրքրությունը 1917—1921 թթ. ժամանակաշրջանի նկատմամբ օրինաչափ է՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատումը որոշիչ իրադարձություն է հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության պրոբլեմների լուսաբանմանն առաջինը ձեռնամուխ եղան իրենք՝ հեղափոխական իրադարձությունների մասնակիցները, որոնք ոչ վաղ անցյալի թարմ տպավորության տակ, հենվելով առավելապես սեփական հիշողությունների ու դիտումների վրա, վերլուծում և ընդհանրացնում էին անցած իրադարձությունների արդյունքները։ Մինչև 1930-ական թվականների կեսը Հայաստանում սովետական իշխանության պատմությանը նվիրված հետազոտություններով հանդես եկան Աշ. Հովհաննիսյանը, Շ. Ամիրխանյանը, Ա. Կարինյանը, Ա. Խանջյանը և ուրիշներ։ Այդ ժամանակաշրջանի աշխատությունների արժեքն այն է, որ գրանցում ցույց են տրված սովետական իշխանության համար մղված պայքարի կարևորագույն փուլերը, հեղափոխական շարժումը Հայաստանում քննված է կենտրոնում տեղի ունեցած իրադարձությունների հետ համադրելով, փորձ է արված բնորոշելու Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի ընդհանուր օրինաչափությունները։ Այդ ժամանակաշրջանի պատմական գրականության հիմնական թերությունը ոչ թե առանձին սխալներն են կամ երբեմն այս կամ այն երևույթների սուբյեկտիվ գնահատականը, այլ քննվող հարցերի շրջանակի սահմանափակվածությունը՝ հիմնական ուշադրությունը դարձվել է 1920 թ. Մայիսյան ապստամբության, Հայաստանում քաղաքացիական պատերազմի, դաշնակցական կուսակցության քաղաքականության պատմության վրա։ Պրոբլեմի ամբողջական լուսաբանման, սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման համար հարկավոր էր տքնաջան աշխատանք կատարել, խոր և բազմակողմանիորեն ուսումնասիրել արխիվային նյութերը։ Հետագայում, սակայն, ընդհուպ մինչև 1950-ական թվականների կեսը, այդ բնագավառում կատարված հետազոտությունները կրում էին էպիզոդիկ բնույթ։ Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության ուսումնասիրման որակապես նոր փուլը սկսվեց 1950-ական թվականների կեսից և նշանավորվեց այդ պրոբլեմին նվիրված մեծ թվով աշխատությունների ստեղծմամբ։

---

23 Ե. Ղ. Սարգսյան, Օսմանյան Թուրքիայի հավակնողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա տարիներին, Երևան, 1965, Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967; Մ. Վ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917 թթ., Երևան, 1969. Дж. С. Киракосян, Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971; А. О. Арутюнян, Кавказский фронт 1914—1917, Ереван, 1971 և այլն։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի ամբողջական պատմությանն են նվիրված Հ. Էլչիբեկյանի, Գ. Ղարիբջանյանի, Ծ. Աղայանի, Գ. Գալոյանի, Ս. Կարապետյանի և ուրիշների մենագրական հետազոտությունները[24]։ Հեղինակներին հաջողվել է առավելապես նոր արխիվային նյութերի հիման վրա ցույց տալ Հայաստանում հեղափոխական շարժման ընթացքը, որը պսակվեց սովետական իշխանության հաղթանակով։ Վերլուծելով 1917—1921 թթ. հիմնական իրադարձությունները, նշված հեղինակները, որոշ չափով կրկնելով միմյանց, իրենց հերթին ընդգծում են քննվող թեմայի այս կամ այն պրոբլեմը, որով լրացնում են նախորդներին և իրենց ավանդը ներդնում նրա մշակման գործում։ Այսպես, Ծ. Աղայանն առանձնակի ուշադրություն է դարձնում Հայաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի քաղաքականության, իսկ Գ. Գալոյանը՝ Հայաստանում ինտերվենցիա կազմակերպելու գործում իմպերիալիստական տերությունների, մասնավորապես ԱՄՆ-ի ունեցած դերի բացահայտման վրա։ Գ. Ղարիբջանյանի և Ս. Կարապետյանի մենագրություններում այդ ժամանակաշրջանի իրադարձությունները շարադրված են Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործունեության լուսաբանման տեսանկյունով։

Ստեղծված է զգալի քանակությամբ գրականություն՝ նվիրված 1917—1921 թթ. պատմության առանձին հարցերի քննությանը։ Հայաստանում հեղափոխական շարժման պատմության առավել մշակված պրոբլեմներից է 1920 թ. Մայիսյան ապստամբության պատմությունը[25]։ Որոշված է այդ ապստամբության տեղն ու նշանակությունը Հայաստանում հեղափոխական շարժման ընդհանուր պատմության մեջ, մանրամասն քննված են ապստամբության ընթացքը, նրա շարժիչ ուժերը, վերլուծված են ժամանակի միջազգային իրադրությունը, ապստամբության պարտության պատճառները և այլ հարցեր։ Հանգամանորեն լուսաբանված է 1921 թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի պատմությունը, որոշված են նրա հիմնական փուլերը, ցույց է տրված միջազգային իմպերիալիզմի դերը դաշնակների կողմից հակահեղափոխական խռովություն բարձրացնելու գործում, մանրամասն լուսաբանված են Հայաստանի աշխատավորների հերոսական պայքարը սովետական իշխանության վերականգնման համար, կարմիր բանակի զորամասերի

---

[24] А. М. Эльчибекян, Установление Советской власти в Армении, Ереван, 1954; նույնի՝, Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении, Ереван, 1957; Գ. Բ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության համար մղված պայքարում, Երևան, 1955, Ծ. Պ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, նույնի՝ Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Ереван, 1962; Г. А. Галоян, Борьба за Советскую власть в Армении, М., 1957; С. Х. Карапетян, Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ереван, 1959; Վ. Ա. Մխքայելյան, Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920 թթ.), Երևան, 1960, Հ. Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970 և այլն։

[25] Գ. Ա. Գալոյան, Հերոսական Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1960, Հ. Ս. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920, Երևան, 1961 և այլն։

օգնությունը և այլ հարցեր[26]։ Մի քանի աշխատություն է նվիրված սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարում հայ ժողովրդին Սովետական Ռուսաստանի ցույց տված օգնության լուսաբանմանը։ Լուսաբանված են այնպիսի հարցեր, ինչպես ՌՍՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Սովետական Ռուսաստանի տնտեսական և դիվանագիտական օգնությունը Հայաստանի երիտասարդ սովետական հանրապետությանը, Սովետական Ռուսաստանի ռազմական օգնությունը Հայաստանում սովետական իշխանության հաստատման և ամրապնդման գործում, Սովետական Ռուսաստանի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ, Հայաստանի պաշտպանությունը Թուրքիայի ոտնձգություններից[27]։ Խորապես ուսումնասիրված է Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի ճակատագրի հարցում[28]։ Հետազոտողները ցույց են տվել, որ Վ. Ի. Լենինը իր կուսակցական ու պետական գործունեության բոլոր շրջաններում մեծ ուշադրություն է նվիրել ազգային ճիշտ քաղաքականության իրականացմանը, մեծ և փոքր ժողովուրդների իսկական հավասարություն ձեռք բերելուն։ Սովետահայ պատմաբանները բազմակողմանիորեն քննել են Վ. Ի. Լենինի ղեկավարող դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, սպառիչ կերպով օգտագործել նրա գրական ժառանգությունը և լենինյան այլ փաստաթղթեր։

Հայաստանում հեղափոխական շարժման պատմության ընդհանուր պրոբլեմին են վերաբերում նաև այն աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորմանն ու գործունեությանը, Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորմանը, երիտասարդական հեղափոխական շարժման պատմությանը, ականավոր հեղափոխականներ Ս. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի և ուրիշների կյանքին ու գործունեությանը[29]։ Հայաստանում հեղափոխական շարժման և սովետական իշխանության

---

26 Ա. Մ. Հակոբյան, Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Երևան, 1960, И. Таирян, XI Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971 և այլն։

27 Ս. Տ. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917—1921), Երևան, 1958, նույնի՝ Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964, А. Н. Мнацаканян, Посланцы Советской России в Армении, Ереван, 1959; Մ. Վ. Արղումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Լ. Ա. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը, Երևան, 1977։

28 Գ. Բ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը, Երևան, 1960, նույնի՝ В. И. Ленин и большевистские организации Закавказья, Ереван, 1967; նույնի՝ Լենինը և Անդրկովկասը, գիրք 1, 2, 3, Երևան, 1970, 1973, 1975, Ա. Ն. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963։

29 Խ. Հ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965, Հ. Ն. Կարապետյան, Հայաստանի կոմերիտմիության ծնունդը, Երևան, 1956, Г. А. Аветисян, Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение Советской власти (1917—1921), Ереван, 1964; նույնի՝ Комсомол Закавказья под знаменем пролетарского интернационализма, Ереван, 1968; «Ленинский комсомол Армении. Очерки истории», Ереван, 1971; Վ. Ա. Ավետիսյան, Սուրեն Սպանդարյան,

հաղթանակի համար մղված պայքարի պատմության բազմազան պրոբլեմների հետազոտման գործում սովետահայ պատմագիտության ձեռք բերած հաջողությունները թույլ տվեցին ստեղծելու լայն մասշտաբների ընդհանրացնող աշխատություններ։ Վերջիններիս թվին են պատկանում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի պատմաբանների «Победа Советской власти в Закавказье» կոլեկտիվ աշխատությունը (Թբիլիսի, 1971), ինչպես նաև Գ. Գալոյանի «Октябрьская революция и возрождение народов Закавказья» (Մ., 1977) մենագրությունը։ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության մշակման գործում ձեռք բերված մակարդակը, կուտակված փաստագրական նյութը, անցյալում վիճելի մի շարք հարցերի լուծումը թույլ են տալիս ձեռնամուխ լինելու Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության բազմապլանային պրոբլեմների բոլոր բաղկացուցիչ մասերի քննարկմանն ու խոր լուսաբանմանը նվիրված ընդհանրացնող կոլեկտիվ աշխատության ստեղծմանը։

Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմության ուսումնասիրումը հիմնականում կատարվել է երկու ուղղությամբ՝ սովետական հասարակության պատմության առանձին փուլերի հետազոտում (կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու, սոցիալիստական շինարարության հետագա զարգացման և ավարտման, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջաններ) և Սովետական Հայաստանի պատմության առանձին պրոբլեմների ուսումնասիրում (բանվոր դասակարգի, գյուղացիության, մշակույթի պատմության և այլն)։ Հասկանալի է, որ երկու ուղղություններն էլ օրինաչափ են և դրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները՝ սովետական հասարակության պատմության հիմնական ժամանակաշրջանների քննությունը թույլ է տալիս ստեղծելու հանրապետության կյանքի ամբողջական պատկերը, իսկ «ուղղաձիգ գծով» առանձին պրոբլեմների ուսումնասիրումը՝ հստակ պատկերացնելու առանձին բնագավառներում ձեռք բերված նվաճումները։

Առավել հանգամանորեն է հետազոտված կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանը։ Այդ ժամանակաշրջանի պրոբլեմներից հետազոտված են՝ հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնումը, Հայաստանում նոր տնտեսական քաղաքականության իրականացումը և դրա հետևանքով կատարված սոցիալ-տնտեսական վերափոխությունները, ագրարային վերափոխությունները հանրապետությունում սովետական իշխանության առաջին տարիներին, կոլեկտիվացման ու ինդուստրացման պատմությունը, ազգային-պետական շինարարության հարցերը՝ ազգային հարցի լուծումը, սովետահայ պետականության ստեղծումը, ԱՍՖՍՀ կազմավորումը, սովետների գործունեությունը և այլն[30]։

Երևան, 1957, Հ. Գ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, Երևան, 1957, Ա. Ն. Մնացականյան, Արեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1959, Ա. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք 1, 2, Երևան, 1963, 1967, Х. А. Барсегян, Степан Шаумян. Документальная летопись жизни и деятельности, Ереван, 1973; նույնի՝ Степан Шаумян, Ереван, 1978 և այլն։

30 Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1955, Վ. Ն. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1956, С. В. Хармандарян,

Սոցիալիստական հասարակության զարգացման և սոցիալիզմի լիակատար հաղթանակի ձեռքբերման ժամանակաշրջանի պրոբլեմների մեջ կենտրոնական տեղ է գրավում Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի հանրապետության պատմության ուսումնասիրումը։ Այդ հարցի վերաբերյալ ստեղծված է զգալի քանակությամբ գրականություն, որտեղ լուսաբանված են Սովետական Հայաստանի ամբողջական պատմությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, հայկական ազգային զորամասերի մարտական ուղին, Հայաստանի զավակների սխրագործությունները ռազմաճակատում, նրանց մասնակցությունը պարտիզանական և դիմադրության շարժումներին, սովետական ժողովուրդների մարտական ընկերակցությունը, Հայաստանի աշխատավորների հերոսական սխրագործությունը թիկունքում և այլն[31]։ Այդ նույն ժամանակաշրջանին են վերաբերում նաև այն աշխատությունները, որոնք նվիրված են հանրապետության զարգացման 4-րդ (1946—1950) և 5-րդ (1951—1955) հնգամյակների տարիներին[32]։

Վերջին տարիներին երևան են եկել զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի պատմության հարցերին նվիրված առանձին աշխատություններ, սակայն այդ ժամանակաշրջանի պրոբլեմների մշակման գործում արված են սոսկ առաջին քայլերը։ Մի շարք աշխատություններում քննված են բանվոր դասակարգի պատմության, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի, սովետական ժողովուրդների կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման հարցերը[33]։

Армянская ССР в первый год новой экономической политики, Ереван, 1955; Գ. Մ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նեպի տարիներին (1921—1936), Երևան, 1978, Բ. Ս. Օհանջանյան, Հայաստանի կոմպարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934), Երևան, 1955, Գ. Վ. Շառոյան, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում (1920—29 թթ.), Երևան, 1962, Հ. Վարդանյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967, Փ Ենդոյան, Հայաստանը ինդուստրիալիզացիայի ուղու վրա, Երևան, 1967, Հ. Ա. Ավետիսյան, Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում (1926—1932), Երևան, 1959, С. В. Харманд арян, К. С. Худавердян, Съезды Советов Армении, 1921—1937, Ереван, 1962; С. В. Харманд арян, Ленин и становление Закавказской федерации, Ереван, 1973; Ц. П. Агаян, В. И. Ленин и создание закавказских советских республик, Ереван, 1976 և այլն։

31 Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954, նույնի՝ Միասնական շարքերում, Երևան, 1975, С. В. Харманд арян. Боевое содружество армянского народа с народами Советского Союза в Великой Отечественной войне, Ереван, 1955; Ս. Նալբանդյան, Թամանցիներ, Երևան, 1961, «Գիրք հերոսների մասին», Երևան, 1964, Ղ. Մ. Դալլաքյան, Մարտական 89-րդը, Երևան, 1964, Տ. Ս. Դրամբյան, Ֆրանսիայի հայ կոմունիստները դիմադրության տարիներին, 1941—1944, Երևան, 1967, Ք. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, Երևան, 1971, Ե. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Երևան, 1975, В. А. Мурадян, Боевое братство, М., 1978 և այլն։

32 Ս. Վ. Խարմանդարյան, Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946—1950), Երևան, 1960, Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին (1951—1955), Երևան, 1962։

33 Ս. Ս. Ամիրյան, Զարգացած սոցիալիզմի բանվոր դասակարգը, Երևան, 1976,

Ինչպես նշվեց, սովետական հասարակության պատմության ուսումնասիրումը կատարվել է նաև առանձին պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Անկասկած, դրանցից կարևորագույնը հանրապետության բանվոր դասակարգի պատմությունն է։ Այդ նույն պրոբլեմների շարքը կարող են դասվել նաև այն աշխատությունները, որոնցում լուսաբանվում են սոցիալիստական մրցության պատմության առանձին փուլերը, ինչպես նաև հանրապետության քաղաքների, գործարանների, ֆաբրիկաների, արդյունաբերության առանձին ճյուղերի պատմությունը[34]։ Սովետահայ պատմաբաններից լուրջ աշխատանք է սպասվում Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը նվիրված հիմնակաղմ աշխատությունների ստեղծման ուղղությամբ։

Առավել լրիվ չափով է լուսաբանված Սովետական Հայաստանի գյուղացիության պատմության այն մասը, որը վերաբերում է մինչկոլտնտեսային դյուղի, ինչպես նաև կոլեկտիվացման պատմությանը։ Քննվել են գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքը, նրանում կատարված փոփոխությունները, դասակարգային պայքարը գյուղում, գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքը, այդ գործում եղած հաջողություններն ու անհաջողությունները, գյուղացիության սոցիալական ակտիվության բարձրացումը և այլ հարցեր։ Լուսաբանված են հանրապետության գյուղացիության աշխատանքային սխրագործությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, գյուղացիության պատմության հարցերը հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ մինչև զարգացած սոցիալիզմի կառուցման ավարտը[35]։ Նախադրյալներ են ստեղծվել Սովետական Հայաստանի գյուղացիության ամբողջական պատմությունը գրելու համար։

Սովետահայ մշակույթի պատմությունն արտացոլվել է այն աշխատություններում, որոնք նվիրված են կուլտուրական շինարարության բնագավա-

---

նույնի՝ Սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները, Երևան, 1973, К. С. Худавердян, Культурные связи Советской Армении, Ереван, 1977; М. А. Григорян, Развитие структуры рабочего класса Армении в период зрелого социализма, Ереван, 1980 և այլն։

34 Ա. Կ. Գրիգորյան, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960, Հ. Ս. Կարապետյան, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը (1920—1940), Երևան, 1980, Լ. Ս. Խուրշուդյան, Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928—1932), Երևան, 1961, Պ. Գ. Սաֆյան, Սոցիալիստական մրցությունը Հայաստանում (1959—1965 թթ.), Երևան, 1973, Գ. Ս. Կոզմոյան, Լենինական, Երևան, 1957, նույնի՝ Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի 25 տարին, Երևան, 1958. նույնի՝ Կիրովական, Երևան, 1960, նույնի՝ Ալավերդի, Երևան, 1966, նույնի՝ Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում 1920—1970, Երևան, 1977, Ա. Պ. Սիմոնյան, Երևան, 1920—1967, Երևան, 1968, Հ. Հ. Ազիզբեկյան, Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից, Երևան, 1966, նույնի՝ Սովետական Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության պատմությունից, 1945—1975, Երևան, 1978 և այլն։

35 Վ. Ն. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., Երևան, 1975, նույնի՝ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937 թթ.), Երևան, 1978, Գ. Մ. Գեղամյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946—1958 թթ.), Երևան, 1968, Ք. Գ. Գրիգորյան, Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945), Երևան, 1979 և այլն։

ում սովետական իշխանության առաջին միջոցառումներին. Հայաստանում կուլտուրական հեղափոխության իրականացմանը, սովետահայ մտավորականության ձևավորմանն ու զարգացմանը, գիտության, լուսավորության մամուլի զարգացմանը և այլն։ Հետազոտվել են հանրապետության մշակութային կապերը[36]։

1950-ական թվականների կեսից սովետահայ պատմագիտության մեջ ուժեղացավ հետաքրքրությունը հայկական գաղթավայրերի և ժամանակակից սփյուռքի պատմության նկատմամբ։ Ստեղծվեցին հայկական գաղթավայրերի պատմությանը նվիրված զգալի քանակությամբ աշխատություններ. որոնցում քննված են գաղթահայերի սոցիալ-տնտեսական և իրավական գրության, իրենց ապաստան տված երկրների հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքին հայերի ունեցած մասնակցության, հայ մշակույթի զարգացման, հայրենիքի հետ գաղութների ունեցած կապերի և այլ հարցեր[37]։

Երևան են եկել այնպիսի աշխատություններ, որոնք նվիրված են ժամանակակից սփյուռքին. դրանցում քննվում են հայերի սոցիալ-տնտեսական գրությունը, նրանց քաղաքական կուսակցությունների և տարբեր կազմակերպությունների գործունեությունը, վերաբերմունքը Սովետական Հայաստանի, խաղաղության և պատերազմի հարցերի նկատմամբ, դիրքավորումը դեպի հայրենադարձությունը և այլն[38]։

Զգալի աշխատանք է կատարված հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող **սկզբնաղբյուրների և փաստագրական նյութերի հրապարակման** ուղղությամբ։ Հրապարակված են հայ պատմիչների մի մասի աշխատությունների քննական բնագրերը (մի քանիսը՝ ռուսերեն թարգմանությամբ)։ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»

---

36 Վ. Ղազանչյան, Սովետահայ մշակույթի առաջին քայլերը, Երևան, 1964, К. С. Худавердян, Культурная революция в Советской Армении. 1920—1940, Ереван, 1966; А. К. Григорянц, Формирование и развитие технической интеллигенции Армении (1920—1965), Ереван, 1967; Գ. Մ. Խաչատրյան, Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Երևան, 1968, Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1920—1930 թթ.), Երևան, 1965, Հ. Ֆելեքյան, Սովետահայ պարբերական մամուլը սոցիալիզմի համար մղված պայքարում, Երևան, 1970, Ա. Խ. Շահինյան, Ուրվագծեր անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմության, Երևան, 1961 և այլն։

37 Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմությունն, Երևան, 1964, նույնի՝ Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1800—1917, Երևան, 1970, նույնի՝ На Крымской земле. История армянских поселений в Крыму, Ереван, 1974; Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, Ֆ. Պողոսյան, Աստրախանի հայոց դատաստանագիրքը, Երևան, 1967, Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, Երևան, 1965, Р. А. Абрамян, Армянские источники XVII в. об Индии, Ереван, 1967; С. В. Овнанян, Армяно-болгарские исторические связи, Ереван, 1969; Ж. А. Апаняи, Армянская колония Григориополь, Ереван, 1969; Մ. Լ. Հովհաննիսյան, Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների պատմության, Երևան, 1977, Օ. Խ. Թոփուզյան, Եգիպտահայ գաղութի պատմություն, Երևան, 1978, Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ակնարկ հայ գաղթօջախների պատմության, հ. 1, 2, Երևան, 1964, 1967 և այլն։

38 Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Հ. Թ. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1969 և այլն։

շարքով հրապարակվել են հին հունական, ասորական, բյուզանդական, արաբական և թուրքական հեղինակների աշխատությունները հայ ժողովրդի պատմության վերաբերյալ։ Մեծ աշխատանք է կատարված կարևոր աղբյուրների՝ XV—XVII դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների (Լ. Խաչիկյան, Աշ. Հովհաննիսյան, Վ. Հակոբյան), «Կանոնագիրք Հայոցի» (Վ. Հակոբյան) և այլ աղբյուրների հրապարակման ուղղությամբ։ XVII—XVIII դդ. հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման ժամանակաշրջանին վերաբերող փաստական հարուստ նյութ է հրապարակված փաստաթղթերի ժողովածուների շարքում։ Փաստաթղթերի ժողովածուներ են հրատարակվել նաև XIX դ. և XX դ. սկզբին Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական շարժման վերաբերյալ։ Դեռևս 1930-ական թվականներին հրապարակվել են փաստաթղթերի և նյութերի առաջին ժողովածուները՝ Հայաստանում հեղափոխական շարժման վերաբերյալ։ Հետագայում այդ աշխատանքը շարունակվել է և հրապարակվել են փաստաթղթերի ժողովածուներ՝ ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում Հայաստանում հեղափոխական շարժման, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի, ժողովրդական տնտեսության վերականգնման, 1920—1940 թթ. կատարված կուլտուրական շինարարության, Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ և այլն։ Այսպիսով, հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ ստեղծված է աղբյուրագիտական ծանրակշիռ բազա։

Որոշ աշխատանք է կատարված պատմագրության բնագավառում։ Հրապարակվել են առաջին աշխատությունները սովետահայ պատմագիտության զարգացման մասին[39], ինչպես նաև զգալի թվով հոդվածներ՝ հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների պատմագիտության վերաբերյալ։ Մի քանի աշխատություններ են նվիրված բուրժուական ռեակցիոն պատմագիտության քննադատությանը, մասնավորապես թուրքական պատմագիտության կողմից հայ ժողովրդի հին, միջնադարյան ու նոր պատմության հարցերի, անգլո-ամերիկյան բուրժուական պատմագիտության կողմից Հայաստանում և Անդրկովկասում հեղափոխական շարժման և սոցիալիստական շինարարության պատմության խնդիրների նենգափոխման մերկացմանը[40]։

Մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա հայ ժողովրդի պատմության հանգուցային պրոբլեմների մշակումը, զգալի քանակությամբ փաստական նյութի կուտակումը, հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքի ընդհանուր ըմբռնման մշակումը և այդ պատմության պարբերացումը նախադրյալներ ստեղծեցին հիմնարար ընդհանրացնող աշխատությունների, մաս-

---

39 Շ. Ռ. Հարությունյան, Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1967, Լ. Հ. Բարայան, Հայաստանի ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրումը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970։

40 Г. А. Галоян, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960; նույնի՝ Ընդդեմ Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության նենգափոխման, Երևան, 1961, Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, М. К. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970 և այլն։

նավորապես բազմահատոր «Հայ ժողովրդի պատմության» ստեղծման համար։ Այդ աշխատությունը ստեղծելու ճանապարհին սովետահայ պատմագիտությունը ոչ միայն մենագրական հետազոտությունների, այլև ընդհանրացնող աշխատությունների, մասնավորապես դպրոցների և Հայաստանի բուհերի պատմության ֆակուլտետների համար ուսումնական ձեռնարկների, «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերի» պրակների ստեղծման փորձ էր կուտակել, ինչը, անկասկած, մեծ դեր խաղաց պատմագիտության և մեթոդոլոգիական բնույթի շատ հարցերի լուծման գործում։ Ութ հատորով «Հայ ժողովրդի պատմությունը» (հրատարակվել են I, III, IV, V, VII, VIII հատորները) արտացոլում է սովետահայ պատմագիտության զարգացման արդի մակարդակը։ Այդ կապիտալ աշխատության ստեղծման գործում ներգրավվել են հանրապետության լավագույն պատմաբանները, ինչպես նաև կուլտուրայի պատմության մասնագետները՝ գրականագետներ, արվեստագետներ։ Ներկայումս աշխատանք է կատարվում ռուսերեն լեզվով «Հայ ժողովրդի պատմության» քառահատորյակը նախապատրաստելու ուղղությամբ։ Բացի այդ, հրատարակվել է «Հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» մեկ հատորով (1972) և հրատարակության է պատրաստվել այդ նույն միհատորյակը ռուսերեն լեզվով։

60 տարիների ընթացքում սովետահայ պատմագիտությունը նշանակալից հաջողությունների է հասել։ Նրա նվաճումները ծառայում են հանրապետության աշխատավորների հայրենասիրական և ինտերնացիոնալ դաստիարակության գործին։

ДОСТИЖЕНИЯ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ

КОНСТАНТИН ХУДАВЕРДЯН

Резюме

Формирование и развитие советской армянской исторической науки происходило путем творческого освоения достижений многовековой армянской историографии и дореволюционной армянской марксистской исторической мысли—в неразрывной связи со всей советской исторической наукой.

Советская армянская историография, как и вся советская историческая наука, прошла три основных этапа своего развития. Первый из них охватывает период со времени установления в Армении Советской власти до середины 1930-х гг. и является этапом становления советской армянской историографии, основное содержание которого заключалось в укоренении марксистской концепции исторического процесса. Второй этап охватывает период с середины 1930-х гг. до второй половины 1950-х гг. и характеризуется дальнейшим расширением тематики исследований, обращением историков к проблемам истории социалистического строительства, более углубленным изучением вопросов социально-

экономической и политической истории армянского народа. Со второй половины 1950-х гг. начался третий этап развития советской армянской историографии. Он отмечен значительным расширением тематики исследований, обращением историков к ряду важных проблем, которые в прошлом не изучались или освещались недостаточно. Именно на этом этапе, опираясь на достижения предшествующих периодов, стало возможным приступить к созданию фундаментальных обобщающих трудов по истории армянского народа.